

ՏԵՐ ԵՒ ՏՆ ՐԵՆ
 ՓՈՐՈՍՏԵԱՆ
 ՎԱՍՄԱ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
 ՊԵՏԷ ԵՒ ՈՒՂՁՈՒ ԱՍ
 ՏՆՈՐԻՆ՝ ԱՐՇԱԼՈՅՍ ԵՐԱԳՐԻ
 ԳԱԼԻԷ (ՎԻՍՍՆ ԵՒ ԵՐԱՍՏԱՆ)

E. TOROSSIAN
 Direc. propr. du journal arménien
ARCHALOUICZ
 LE CAIRE (Égypte)
 Posté-restants

ՄՐՁԱԼԱՅՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՍՏՈՒ ՆԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆՆԻԿ Է
 ԵՒ ԵՂԵՍԱՍԻ ԾԱԽԲԸ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղողած
 գրութիւնք եւ չ'են ցրուիր:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԷ
 Կանխիկ վճարելի են

ՀԱՆՐԱՅԻՆ ՓԱՓԱՔՆԵՐ

«Առաջնորդարան չունի» ք. հոն մարդ չի գտնուիր: ազգային գործերը ինչ ջուրի վրայ են. ինչ կ'անցնի կը դառնայ. ժողով ժողովական չկայ. ազգային հաստատութեանց ի նպաստ ինչ որոշումներ կը տրուին. ինչու թերթին միջոցաւ հանրութեան չ'մանուցողի աղբ ամենը. և այլն և այլն»:

Առաջին անգամ մեղի հանդիպողները այս հարցումները կ'ուղղեն մեզ և որ անշիւն է, կ'ստիպեն զմեզ գոհացում տալ իրենց հարցերուն:

Լաւագոյն կը համարինք որ այս կարգի հետաքրքիրներուն եռանդը իրենց սրտին մէջ չ'մարելու համար, հրապարակաւ գոհացում տանք:

Մեր մեծերը կ'ըսէին թէ «եղած գիտողութեան մը հանգիստ լուծութիւն պահելը զայն հաստատել կ'ենթադրէ»:

Առաջնորդարանը սակայն այդ ճշմարտութիւնը իր բուն իմաստով չ'է կարող ընդունիլ ինչպէս մինչև ցարդ ընդունած և գործադրած չ'է սահմանադրութեան յօդուածոց արամադրութիւններն. լուծութիւնը արհամարհանք կը նշանակէ ըսելով ինքզինքը համոզել ուզած է, առանց նկատողութեան առնելու որ այս ընթացքը պարզապէս սովորական մահկանացուներու հետ խառնուած տարբեր դասակարգի մը վերապահելի լսելի յանդգնութիւն մը կը համարուի:

Եթէ անբաւական է այս մասին մեր վեճերուն գործածած վերոյիշեալ բացատրութիւնը՝ որ տարիներու ընթացքին մէջ նախագործուած և փորձառութեան արդիւնք զուտ ճշմարտութիւն մ'է, հարկ անհրաժեշտ է գոհացումը տալ ամեն անոնց որոնք վերագրեալ հարցերով ոչ միայն սակայ իրենց ուղեղը կը յողնեցնեն, այլ և յաճախ զմեզ կ'զբաղեցնեն և պատճառ կուտան կրկնելու այն ամենը, ինչ որ արդէն քանիցս յեղեղուած է այս էջերուն մէջ:

Ազգային Առաջնորդարանի մեջ կատարուած բոլոր գործողութիւնք և մէկ մէկու յաջորդող որոշումներն — թերևս առ յաւէտ — մեր ազգայնոց գիտակցութեան հետ մնալու դատապարտուած պիտի ըլլան, ի մէջ այլոց սա գերագոյն պատճառաւ ալ որ մեր վարիչները ոչ մէկ արտէն ընդունած

են և կուզեն ընդունիլ թէ՛ իրենք ժողովրդեան ներկայացուցիչներն են, ժողովուրդէն ընտրուած, անոր իրաւանց հաւատարիմ աւանդապահը և ի հարկին համարատուն, ըլլան անոնք հարուստ, աղքատ, ծեր և երիտասարդ դասակարգերէն:

Իսկ մարդիկ և այլազան օրինակներով հաստատուած իրողութիւն մ'է թէ Առաջնորդարանի մէջ յարատե տիրած է և կը տիրէ հին ամիրայական գրոշմ կրող վէս ոգին, որուն հետևանք վարչային անհատք և անոնց գձուձ արբանեակները կը յանդգնին դէպ ի ազգային անհատները պախարակելի արհամարհանք մը ցոյց տալ. մանաւանդ դէպ ի անոնք՝ որք իրենց անհատական իրաւանց պաշտպան կանգնելու համարձակութիւնը կ'ունենան:

Եւ եթէ ցաւալի պարագայ մը կայ, այն է որ մեզմէ շատեր ազգին սրտին մէջ մարճած և զանազան դիմակներու տակ երևցած դասակ մը աղտոտներ իրենց գործերէն դատելու փոյթը չեն տանիր:

Այսպիսիներ երբ ժողովրդական խաւերու մէջ կը գտնուին, յանդգնութիւնը կ'ունենան ինքզինքնին ժողովրդական շահերու պաշտպան ներկայացնել, քակայն Առաջնորդարանի սանդուխտներէն վերջ կը մոռնան այդ ամենը և ի վնաս ազգային շահուց և օրինաց, ամիրայական հոսանքին մէջ ամենակոյր և վնասակար գործիքներ կը դառնան և այս՝ միմիայն աշխարհային փառքերէ շլացած. և որով կը յառաջանայ անկերպարան վիճակ մը ազգային բոլոր գործերու մէջ:

Մեզմէ շատերուն ազգային շրջանակի մէջ պատահած անց ու դարձէն անտեղեակ լինելը, մի ուրիշ գլխաւոր պատճառի ալ կրնանք վերագրել, որը ոչ նուազ մեր քաղաքացիութիւնը գրաւող պարագայ պէտք է նկատել:

Հարկ է ընդունիլ և ստոյգն ալ այս է, թէ մեր ազգային վարիչներու գործերը աշխարհ իրարու հակասական, աշխարհ մանուածապատ և եկրիկներով լի, աշխարհի հակասահմանադրական են, որ ամենէն անգոր քննադատութեանց առջև իսկ առկալու հանգամանքը չունին և այս է բուն իսկ պատճառը որ միմիայն ինքզինքնին համոզելու չափ չ'ունին առարկութիւններ մէջտեղ դնելով և խալը կուտան զայնս հրապարակաւ ժողովուրդին ներկայացնել:

Ահա թէ ինչու մեր թերթին մէջ ազգային գործոց յատկացուած մասնաւոր գրութիւն չենք բանար և ինչու մեր ժողովրդի զգայուն դասակարգին աչնիւ փափաքներուն գոհացումը կարելի չպիտի ըլլայ տալ:

Եթէ այս պակասը «Արշալոյսի» երեւալէն ի վեր միայն գոյութիւն ունենար, այն ատեն մենք ինքզինքնին պիտի մեղադրէինք թերեւ. քայքայ զրեթէ նոյն բանը պատահած է նաև «Փարոս» ժամանակները, որուն շատ մը ապացոյցները ունինք մեր ձեռքին տակ:

Ըսել է մեր վարիչներն են որ լոյսի և ճշմարտութեան առջևէն խոյս կուտան: Ուրեմն թո՛ղ իրենք մտածեն թէ պատմութեան էջերը իրենց նկատմամբ ինչե՞ր կըրնան պարունակել և ինչ կը վճռէ հանրային անեղ դատաստանը իրենց մասին:

ՉՈ՛՛՛ ՍԸ ԵՒՍ

«... Մեռած գտանք գինքը խոնաւ ու մութ սենեկի մը անկիւնը իր ջորս գունաւ գաւազներով և հիւանդ կնոջ մով շրջապատուած»
 Նամակի մը մէջ մեզ այսպէս կը գրէ Մարտիրոսյէն Իւթիւճեան Սրբազանը՝ Պ. Մարտիրոս Գոնտածեանի մահուան պիտակով լուրը:
 Պոլսոյ արիւնահեղ դէպքերու դժբաղդ զոհն է ասիկա:

Իրքեւ լուսանկարիչ Երուսալայի մէջ իր անունը ունէր. Լուսանկարչութեան մէջ իր մէկ գտած նոր դրութիւնը ընդունուած էր Յորանաձորի Ալիադիմիայէն և Յորանայի, Անգլիոյ ու Սպանիոյ մէջ կը գործածուէր իր անունով՝ Systeme Condazian:

Իր դիրքը որ Տիէբի մէջ (Յորանայի հիւսիսային կողմը) շինած էր, կարեւոր անձերու դրուումով կը թողու. Կը մոկնի Պոլիս, քիչ մըն ալ ազգին ծառայելու համար:
 Բերայի մէջ լուսանկարչութեան տուն մը հաստատեց: Փայտէն յաջողութիւն մը գտաւ: Մանաւանդ իր յաջողութեան շատ նպաստեց իր կինը որ հմուտ էր իրեն պէս արուեստին փէթիթնայ, Ամին. Մատթէոս Իզմիրլեանի պատրիարքութեան օրով, խնդրուեցաւ թողուլ պաշտօնը և Ազգ. Հիւանդանոցի Տեսչութեան պաշտօն վարել Ուրտեղ քիչ ժամանակէն Արուեստանոց մը հիմնելու գաղափարը յղացած էր և ընդունուած հոգաբարձութեանէն:

Սակայն կոտորածի ժամանակ ստոր մասնութեան մը զոհուելով, ամեն բան, դրամ, ինչք, և րեսի վրայ թողուլ հաղիւ կրցաւ ինքզինքը նաև ձգել:

Ժամանակ մը Գահրէ իր բարեկամներու միջոցով կառավարական վարժարանին մէջ պնդատնավարեց: Այդ դժբեղ տեւական շրջանուն քաւ

նի մը ամիսէն թողուց եւ եկաւ Աղեքսանդրիա :
 Կիրն — որ ֆրանսացի մըն է — դիմեց ֆրանս-
 սական դեսպանատուն : Ժամանակ մըն ալ հոս
 դեսպանին խոստովանեց զործարարութեան սպա-
 սելէ յետոյ, օրին մէկը Մարսիլիա կը մեկնէր
 ձեռքը յանձնարարութիւնով մը հոն դեսպանին
 կողմէ քարափի ընկերութեան մէջ պաշտօն մը
 գտնելու յոյսով : Անկէ ի վեր քանի մը ամիս ան-
 ցաւ եւ խեղճը դեռ գործի չէր կրցած անցնիլ, ու
 այսօր իր մահուան լուրը մեզ կը հասնի :
 Բռնապետին զոհերու շարքին մէջէն է այս
 հաւածուած արուեստագէտը : Խեղճ մարդ . . . :
 Աղեքսանդրիա ԱՂԵՂՆԱՒՈՐ

Մէկ քանիներու յայտնած փափաքա-
 նաց համաձայն «Իրաւունք»-էն կ'արտա-
 տակենք հետեւեալ նամակը, որ «Օռօռ»-ի
 խմբագիրներէն Պ. Բիէն Բիլիաու, Փրանս-
 սայի Հանրապետութեան Նախագահին ուղ-
 դած է, Սուլթանին կողմէ անոր տրուած
 իմօթիագի պատուանշանին առթիւ :

ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏԻ ԽԱՉԸ

Պարոն, ուրեմն այսօր պիտի ընդունիք «Նը-
 շանը Իմօթիագ»-ի շքանշանը, որ խաղաղութեան
 մէջ շուրջ 400,000 Օսմանեան հպատակներու
 որոնց 300 հազարը հայեր են, կանոնաւոր սպա-
 նիչին, Ապտիւլ Համիտի կողմէ զրկուած է ֆրանս-
 սական հանրապետութեան նախագահին :

Փրանսայի մեր գաղափարները, զգուշի աւա-
 զակին խնդրանքը առանց վիճարանութեան են-
 թարկելու, չեղեալ նկատելով յայտարարեցին թէ
 նա ըստ իր խոստովանութեան Մեծ Մարդասպան
 եւ Կարմիր Գազան մ'է, եւ դուք հանդիսաւորա-
 պէս կ'ընդունիք քառասուն տարի ծառայող թուրք
 պաշտօնեաներու վերապահուած այդ պատուա-
 նշանը զոր Սերոպայի վեհապետներէն միայն կ'իյեժժ
 Բ. Կարմիր կը կրէ. իսկ Անգղիոյ թագուհին սոս-
 կուժով ու զգուշանքով մերժեց զայն :

Ձեր բարի համբաւին համար լաւագոյն էր
 որ դուք ալ նոյնը ընէիք, եւ երբէք մտիկ չընէիք,
 այն օտարտի խորհուրդներուն որ տուաւ Կ. Պոլսոյ
 դեսպանը, «Շէֆէր ԲՕՍԹԱՆ ԲԱՇԱՆ» ինչպէս
 կ'անուանեն հոն, Մեծ Մարդասպանին եւ իր ար-
 բանակներուն հանդէպ ցոյց տուած քաղցր վար-
 մունքին համար :

Անշուշտ կ'անպիտանայիք որ իրարու հակա-
 ակորբ եւ գրեթէ թշնամի գաղղիացիներն անգամ
 միացան Ապտիւլ Համիտի դէմ եղած հանրային
 դատապարտութեան մէջ, որոնք են Պ. Փօրթ Բլէ-
 մանսօ, Պ. Տընի Բօշէն, Պ. Զատօք Բահըն, Հայր
 Շարմիշան, Բօլ ար Բասանեաք եւ Ձեր նախարար-
 ներէն մին Միլոսան, Անատօլ Փրանս, Ժիւլ Լըմէթօր,
 Ժան Ժօնէս եւ Բարիզի արքեպիսկոպոսը. այնպէս
 որ այնչափ տարբեր եւ այնչափ իրարու ներհակ
 մտքերը մաքնամաթիքական ճշդութեամբ մը հա-
 մաձայն գտնուեցան :

Ձեզի շքանշանը թէ ինչ անհերքելի վաւե-
 րագրեր գրեցիք մղեցին այդ կարծիքը կազմելու,
 այնպիսի դիւանագիտական ճշմարիտ վաւերացող-
 թեր զոր ռճրագործը անգամ չկրցաւ ուրանալ :
 Անոնց կը բաւէր նոյն իսկ մեր գեղին տեսրակ-
 ները որոնց մէջէն Պր. Կապրիէլ Հանթօ մանա-
 լանդ իր անձը պատասխանատուութենէ փրկելու
 այլանկի փութկոտութեամբ մը, նենգամտօրէն
 կարեւոր մասերը վերուցած է :

Պարոն, գիտէ՞ք թէ Ապտիւլ Համիտ Բ. ի իշխա-
 նութեան տակ ի՞նչ է Եւրոպական եւ Ասիական
 Թուրքիոյ բուն վիճակը :

Գիտէի՞ք որ տուրքեր հաւաքելու համար Հա-
 միտէի գունդերը գիւղեր կը թալանեն եւ կը նստին
 գիւղացոց տուները, ինչպէս կ'ընէին Լուի Ժ'րդի
 հարկապահանջները, կիները, փոքրիկ աղջիկները
 եւ պզտիկ տղաքները դուրս կը քաշեն իրենց ան-
 կողնէն ու կ'առեւանգեն եւ մարդոց դէմքերը
 աղտոտութիւններով կը պղծենա կը տանջեն ու
 ըստ հաճոյս կըսպանեն :

Գիտէի՞ք որ՝ տպագրուած Հայերէն գիրք մը,
 կամ յեղափոխական համարուած թուրքերէն թեր-
 թի մէկ կտորը ունեցած ըլլալու ոճրին համար
 հազարներով մարդիկ բանտը զրկուած են :

Գիտէի՞ք որ՝ հոն բանտին մէջ հասարակ ոճ-
 րագործները զէնքով կը թողուին, անզէն քաղա-
 քական յանցաւորները սպաննելու եւ այսպէսով
 Տիրոջ շնորհը ստանալու համար :

Գիտէի՞ք որ բոլորովին անմեղ ամբաստանեալ
 մը հարցաքննելու պատուակով զուլսը անիւցին
 եւ պզտիկ կլոր ծակ մը բացին որուն մէջ կիսո-
 վին ոչիւրով լեցուած կաղինի կեղեւ մը ներմու-
 ծեցին ծանր քարի մը ճնշումով : Խեղճը քանկցա
 կը մարի բայց ամեն անգամին զանի խնամքներով
 կըսթափեցնեն կաղինը զլուսն մէջ մտնելէն յետոյ,
 (Կապրայ Տետրակ 1896 օգոստ. թիւ 13) :

Գիտէի՞ք որ Սուլթանի հպատակները ոչ միայն
 երկրէն, այն դժոխքէն, առանց անցազրի չեն կա-
 որող ելլել ալ նաեւ իրենց արգիւտած է մինչեւ
 իսկ քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ պտտիլ եւ
 այսպէսով Ապտիւլ Համիտ զանոնք կըսպանէ ի-
 իրենց տեղը թշուառ եւ անօթի :

Ահա այս է իսկական վիճակը Անշուշտ կ'ան-
 գիտանաք նաեւ թէ ի՞նչ է արդի արտասովոր վի-
 ճակը. եւ ինչ անցաւ տոսկալի շարդերուն ժամա-
 նակ, ուր Նիշանը-Իմօթիագի բաշխողը ներոնէ,
 Ատիլայէ եւ անամորթ թագաւորներուն շարա-
 գունէն ալ աւելի նշանաւոր եղաւ :

Գիտէի՞ք որ միայն Հայաստանի մէջ 300,000
 մարդկային արարածներ ինքը կարեւր սպաննել,
 այրել, բզկտել, մորթալերծ ընել եւ կ'աճծող
 տուաւ :

Գիտէի՞ք որ Տրապիզոնի մէջ դահիճները փո-
 ղոցները եւ արիւնով ներկուած հայկական թա-
 ղերը կեռերու անցուած մարդկային մար կտոր-
 ներ պտտեցնելով կը պօռային. «Ո՞վ կուզէ զուխ-
 ներ, թեւեր, սրունքներ, ոտքեր, գնեցէ՞ք շատ
 սեփակ է » :

Գիտէի՞ք որ ուրիշ տեղեր ալ վիրաւորեալ-
 ները կը խորովէին, քարեղով կ'օծէին եւ ող՝ ող՝
 կ'այրէին. յիւ կիներուն փորը ճեղքելով մանկիկները
 իրենց հօրը ծունկերուն վրայ կտոր կտոր կ'ընէին
 եւ տղաքը վեր նետելով իրենց սուրբերուն վրայ
 կ'անցնէին :

Գիտէի՞ք որ Եգիպտոյ Մայր եկեղեցիին մէջ
 3000 այր, կին, ծեր, տղայ այրուեցան Նազիթի
 փաշայի զօրքերէն, եւ երեք ամիս վերջն ալ հիւ-
 պատոս Ֆից-Մօրիս արիւնհեղութեան վայրը այ-
 ցիկելով դեռ սալաքարերը մարդկային ճարպերով
 եւ մածուցիկ արիւնով շաղախուած գտաւ :

Գիտէի՞ք որ Կարմիր Սուլթանը 1894ի Սա-
 աունի կտորածէն սկսելով շարունակաբար 1895ի
 ամբողջ Անատօլի, եւ 1896ի Կ. Պոլսոյ մօտա-
 ւորապէս 10,000 հոգի շարդերով, երկու տարուան
 շրջանի մը մէջ իր ջնջումի գործը զուլս հանեց :

Գիտէի՞ք որ Կարմիր Սուլթանը ինքն էր ուղ-
 դակի, կամաւոր հեղինակը եւ պատասխանատու
 կոտորածներուն ու ընդհանուր ջարդերուն :

Գիտէի՞ք որ հանդարտ ժամանակի մէջ աւա-
 զակները կեսարիոյ մօտ գիւղի մը այգիներն ա-
 ւերելով քանի մը հայեր սպաննեցին, հրաման
 տրուեցաւ ապիկար կառավարիչին ձերբակալուած
 ները ազատ արձակելով իւրաքանչիւրին մօտաու-
 րապէս 80 ֆրանքի գումար մը տալ. ի նշան իր
 գոհունակութեան :

Գիտէի՞ք որ Պ. Փօլ Բամպօնի պալատը ըրած
 մէկ սպանական գիտուք բաւեց Տիգրանակերտի
 ջարդին վերջ տալու :

Գիտէի՞ք որ Պոլսոյ կտորածը դպրեցնելու
 համար նոյնպէս բաւական եղաւ Կարմիր Գազանին
 զեսպաններու կողմէ տրուած բաց հեռագիր մը,
 որով կ'ազդարարուէր թէ հակառակ պարագային
 յարձակում պիտի կրէ :

Գիտէի՞ք որ մեր այն ատկէի գիւնորական
 կցորդ տեղակալ-գնդապետ Վիլար Հայր Սալվա-
 սօրի սպանմանը առթիւ, քննութիւն մը կատարեց
 ու իր տեղեկագրոյն մէջ ցոյց տուած ապացոյց-
 ները յստակօրէն կը հաստատէին Սուլթանի դերը
 (Իւղին տետրակ 1898 թիւ 231) :

Գիտէի՞ք որ Պ. Տը լա Պուլընիէն, այն ա-
 տենուան մեր գործակալը, Պոլսոյ մէջ ամենայն
 պաղարկուութեամբ գործուած ջարդերը պատմել
 վերջ, իր 3 սեպտ. 1896ի հետագրով կ'աւելցնէ.

«Ձեր վսեմութեան չեմ կրնար թուել եղած դէպ-
 քերու անվերջանալի շարքը, որոնք յայտնապէս
 կ'ապացուցանեն թէ Սուլթանը ինքն է որ այս
 սպաննիչներուն ձեռքը, զէնք տուած է » :

Գիտէի՞ք որ՝ Ապտիւլ-Համիտ բաց ի Հայերէն,
 առանց կրօնքի եւ ազգութեան խորութիւն դնե-
 լու շարքած է Թուրքեր, Արապներ, Պուլկարներ,
 Յոյներ, Եգիպտեցիներ, Տրիպոլիներ եւ Սուրիացիներ,
 իր խնդութեան եւ վայրագութեան հաճոյքին
 համար :

Նոյնպէս գիտէ՞ք որ՝ մասնակի վրէժխնդրու-
 թիւններու եւ գաղտնի սպանութիւններու մէջ
 ալ քերականց եղած է անիկա Թաիֆի մէջ պան-
 նել տուաւ Միթհատ փաշան եւ յետոյ հիւսայեց
 որ գերեզմանէն հանեն զոհին գլուխը եւ արկղիկի
 մը մէջ դնելով իրեն զրկեն, իբր արուեստական
 աւարկայ մը. եւ նա իր ձեռքովը սպաննեց իր
 ութը տարեկան մէկ զաւակը ու պալատին մէկ
 պարտիզպանը որ Երլարզի ծառուղիները հարթե-
 լու համար քիչ մը ուշ մնացած եւ այդ զարու-
 րիլի Շըմիսօյին հետ դէմ առ դէմ գտնուելու զք-
 բաղդութիւնը ունեցած էր :

Պարոն, անշուշտ, կ'անգիտանայիք այս պաշ-
 տօնական եւ անպաշտօն ոճիրները : Ի՞նչ պարզ
 եւ քաղցր բարբի տէր եւ բաժնի ու լաւ մարդի-
 մը համբաւը ունիք. կարելի է Ձեզի ըստած է
 թէ երկրին շահը Ձեզ կը հարկադրէ ընդունիլ ծի-
 ծաղելի խաղալիքը եւ այդ բանը մեծ հետեւանք մը
 առաջ չ'պիտի բերէ :

Ձեզ խաբած են, Պարոն, կը ցաւիմ Ձեզի,
 այդ խաղալիքը արիւնով շաղախուած է, եւ երկչ
 բին ոչ մէկ շահը չէր կրնար Ձեզ ստիպել Սուլթ-
 անի Ապտիւլ Համիտ Բ.էն, Մեծ Մարդասպանին
 եւ Կարմիր Գազանին բան մը ընդունելու :

Դէպ ի նա, մեր հետեւելիք քաղաքականու-
 թիւնը, Փրանսայի պատուոյն եւ իր ժողովուրդին
 բարբիւն համար՝ որոնք կը տառապին ու մեզի
 կ'աղաղակեն, պէտք է ըլլայ Սուլթանը վնասելու
 ձեռնհասութեան զրկել. հարկ չկայ զայն չուան-
 ներով կապելու եւ ոչ ալ Երլարզի աջ ջրքը կա-
 խաղալու քարձրացնելու, այլ միայն այս վտանգա-
 ւոր խնդր փակելու է այն սպալատին մէջ, ուր
 բանտարկուած է իր Մուրատ եղբայրը. եւ այն
 օրը մենք զինքը հանդարտութեան մէջ դրած կ'ը-
 լանք ինչպէս կ'ընեն անբուժելի հիւանդներուն,
 առանձնութեան մէջ թողլով :

Բայց մինչեւ այն օրը մենք չպիտի դադրինք
 զայն հալածելէ ու աշխարհի ատելութեան մատ-
 նելէ եւ մենք պիտի ցաւինք ամեն անգամ, երբ
 գիտնալով կամ, ինչպէս այսօր չ'գիտնալով անոր
 ոճիրները, նախարար մը, կամ երկրի մը պետ
 անոր մեղակիցը ըլլալու երեւոյթը կուտայ ինք-
 նիրեն եւ անոր բռնապետութիւնը կը հաստատէ :

«Օրոն»
 17 Փետր. 1900

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ

Լոնտոն, 10 Մարտ
 Բրէթորիայէն առնուած լուրերուն նա-
 յելով, Բրիտանական զօրագունդերէն
 12,000 հոգի Պօէրներու դիրքին կ'սպառն-
 նան Հէլլիմաքէրի կողմէն :

Լոնտոն, 12 Մարտ
 Լորտ Ռօպըրթս կիմայնէ թէ՛ նորէն
 հեռագրած է Բրիւկէր կ. Սթէյն Նախա-
 դահներուն, գանգատելով ճերմակ դրոշակ-
 ներու զեղծումներուն դէմ՝ զեկուցած է
 միանգամայն թէ այս զեղծումները կրկնուե-
 լու պահուն, հակառակ իւր կամայց՝ ստի-
 պեալ պիտի ըլլայ հրաման տալ զօրքերուն՝
 այս նշանին առջև այլ եւ կ'անդ չ'առնելու
 համար : Դանգատած է նաև պայթուցիկ
 ռուսներու գործածման դէմ :

Լա Հէյ, 12 Մարտ
 Կը հաւաստեն թէ Նախագահ Բրիւկէր
 խնդրած է Բրէթորիայի հիւպատոսներէն,

որպէս զի իւրաքանչիւրը իրենց կառավարութեան քով միջամտեն, խաղաղութեան վերահաստատման համար:

Լորէնսօ-Մարքէզ, 12 Մարտ

Ազատ հանրապետութեան քարտուղար Պ. Յիշէր և Թրանսվալի քարտուղար Պ. Վօլմարան հոս հասան:

Պիւրկէրսօրֆ 12 Մարտ

Ջորավար կաթագոր ազատ հանրապետութեան սահմանը՝ Պէթիւլի մտեցած է. երկաթուղւոյ կամուրջը քանդուած է. և թշնամին հիւսիսային եղերքները կըբաղի:

Փարիզ, 12 Մարտ

Հանգլային կրթութեան նախարարը, 2,200,000 ֆրանքի վարկ մը քուէարկել կ'առաջարկէ խորհրդարանին, « ի՞նչաթիւ Ծրանսէզ » ի վերանորոգման ձեռնարկելու համար:

Լոնտրա, 13 Մարտ

Լորտ Սալզպուրի խորհրդարանին մէջ յայտարարեց թէ Գրիւկէր և Սթէյն նախագահներուն խաղաղութեան առաջարկին պատասխանած է թէ՛ կը մերժէ Թրանսվալի և Օրանսի անկախութիւնը ընդունելու:

Լոնտրա, 13 Մարտ

Լորտ Ռօպըրթս 13ի երեկոյեան ժամը 8ին կը հեռագրէ. « Աստուծոյ օգնութեամբ և Նորին Վեհափառութեան քաջամարտիկ չորանց ուժով, զօրագունդերը ընդ հրամանատարութեամբ իմով Պրոմֆօնթայնի տիրեցոն. երեկ երեկոյէն սկսեալ Բրիտանական դրօշը կը ծածանի նախորդ նախագահ Սթէյնի թողած երկրին վրայ »:

Ճրագէր — անգամ վերջին կառավարութեան — քաղաքապետը՝ և ուրիշ պաշտօնատարներ կառավարական գրասենեակներու բանալիները մէկտեղ ունենալով, զմեզ գիմաւորեցին քաղաքէն երկու մղոն հեռու տեղ մը. թշնամին մերձավայրերը թողուցած է:

Ամէն ինչ հանդարտութեան մէջ կը գտնուի:

Ջորագունդերը սիրալիր ընդունելութիւն գտան բնակիչներէն:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱՎԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՄԹ 16 ՄԱՐՏ 1900

4562	2724	3221	8838	2686	4191
9684	25	6854	1438	3891	4774
2037	4887	4035	499	3130	3813
8324	2856	9348	9684	7237	8785
7382		5995		1415	

ԱՂՔԱՍԱԽՆԱՄԻ ԳՈՐԾԵՐ

Աղքատախնամ Ընկերութեան հանգստի կիսաշրջանը աւարտած կը կարծուի երկար բարակ ձգձգումներէ վերջ, ինչպէս կը տեսնուի Տիար Յ. Քիւրքէտանի ի հրատարակութիւն մեզ զրկած ներկայ կարևորագոյնէն, Առաջնորդարանը վճռական քայլ մը առնել կուզէ այս խնդրոյն մէջ. սակայն որովհետև Առաջնորդարանը իր նախորդ սխալ քայլերովը իր վարկը նուազեցուցած է յայս ժողովրդեան, հարկ կը տեսնենք հրաւեր ուղղել աղքատասէր բոլոր ազգային անհատներու, որպէս զի փութան բարեսիրաբար պատասխանել եղած հրաւերին, իսպառ վերջ մը գնելու համար այն տաղակալի խնդիրներուն, որ աղքատախնամին շուրջը կը դառնան:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ի գիտութիւն Պատ. անդամոց Աղքատախնամ Ընկերութեան՝ կը ծանուցուի թէ, Առաջնորդարանի տարւոյս փետրուար 21)5 Մարտ 1. 1073 համար պաշտօնական յայտարարութեամբ ծանուցեալ նիստն տեղի պիտի ունենայ Արթ. Տէր Եզնիկ քահանայի նախագահութեամբ առաջիկայ կիրակէ 5)18 Մարտ, կէս օրէն յետոյ ժամը երեքին Սուրբ Եկեղեցոյ յրջափակին մէջ մանկապարտէզի օրահը:

Առաջնորդական փոխ-տեղապահ

ՅԱՆՈՒՆ ԱՐԱՔԻԻՐԻ ՈՐԲՈՑ ԾՆՈՐՀԱԿԱՆԻՔ

« Գահիրէի հայոց Որբասիրաց ընկերութեան » Գործադիր ժողովոյ Ատենապետ՝ Տիար Առաքել Պէրպէրեան և Ատենադպիր Տիար Ապահ Պետրոսեան՝ « Արշալոյս » ի սնորհութենէն ստանալով 50 դր. ողջ եզրկատ. (Վասպուրականցի և Արաբկիրցի ազգայնոց կազմած Որբասիրաց ընկերութիւններուն բարեպաշտ Տիկնոջ մը կողմէն սակէ առաջ նուիրուած գումարին կէսն.) յանուն որբոց հրապարակաւ իրենց անկեղծ և սրտագին շնորհակալաց զգացումներն կը յայտնեն յիշեալ բարեպաշտ Տիկնոջ և այս առթիւ հրաւեր կը կարգան ամեն ազնիւ և վեհանձն սրտերու, որպէսզի հետեւող ըլլան նմանօրինակ բարեսիրական մտածմանց և սփոփել փութան տառապեալ և անտէր որբոց վշտերն:

181րդ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՔՐԷՏԻ ՖՕՆՍԻԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ

15 Mars 1900

Ա. պարգև ֆրանք 50,000 թիւ 13,804

Հետևեալը 1000ական ֆրանք կը շահին

17,083	26,842	32,231	35,955
38,350	58,128	67,857	85,794
93,460	126,417	132,388	152,475
157,930	174,524	204,985	215,644
234,899	252,375	267,224	268,400
274,132	272,622	319,549	343,320
353,830			

Տնօրէն « Արշալոյս » լրագրոյ Աստ

Գահիրէ հասնելէս ի վեր իմ քայլերուս առջև քահանաներու և այլոց կողմանէ հանուած դժուարութիւնները, և այլ և այլ շրջանակներու մէջ տարածուած քմածին զրոյցները զիս վիրաւորելով, կ'ստիպուիմ խնդրել պատ. սնօրէնութենէզ, որ հաճիք հետեւեալ Պատրիարքարանի պաշտօնութեղթը հրատարակել, որուն բնագիրն իսկ ներփակելով կը զրկեմ Ձեզ ի գիտութիւն և ի պատշաճ սնօրինութիւն: Եմ բարեմաղթու Ազգիս,

ԳԱՔՐԻԷԼ ՔԱՀ. ՉԷՆՃԻՐՃԵԱՆ
Գահիրէ, 25)9 Մարտ 1900

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կ. ՊՕԼՍՈՅ
Թիւ 320

Գերապատիւ Առաջնորդ Ս. Հարթ, Արթ. Առաջ. Տեղապահ, Փոխսնորդ, Առաջ քահանայք և թաղ. խորհուրդք, Գաւտային վիճակաց և թէմօրէից Սբ. Եկեղեցեաց հայոց:

Գրամատոյց Ձէնճիրճեան Արթ. Տէր Գաբրիէլ քահանայ հիւանդութեան մը ենթակայ լինելով ի դարման հարկադրուած է ուրեք ուրեք ճանապարհորդութիւն և օրափոխութիւն ընելու մինչ ց'ապաքինուիմ կատարելագլէս:

Հրամանաւ Ամեն Պատրիարք Սրբազան Հօր կը յանձնարարուի, որ բարեհաճիք կարեկցելով իւր հիւանդոտ վիճակին, հոգեւորապէս և նիւթապէս մխիթարել և մխիթարեալ սրտիւ կայունացանել շնորհակալու և աղօթապարտ յաւիտեան:

Մնամք խորին յարգանօք

Պատր. փոխսնորդ

ԳԱՔՐԻԷԼ Մ.Վ. ՉԷՎԱՀԻՐՃԵԱՆ

Կ. Պոլիս 9 մարտ 1896

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Փարիզ 2 Մարտ

ԵՐՎՈՒ ՏԱԿԷՆ ԹԷԼԷՖՈՆ — Անթել հեռագրէն յետոյ ահաւասիկ կը խօսին ռուրիշ գիւտի մը մասին որ ոչ նուազ օգտակար խոստումներ կ'ընէ. Էտիսըն ուրիշ գիտնականի մը հետ կաշխատի ծովու տակէն հեռաձայն (թէլէֆօն) մը հաստատելու համար, որու շնորհիւ Ատլանտեան Ովկիանոսի մէկ կողմէն միւսը կարելի պիտի լինի խօսիլ:

Սակայն առաջին անգամէն Եւրոպայէն Ամերիկայի հետ խօսիլ կարելի չ'պիտի լինի:

ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎ ԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՈՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յ'Աղէքսանդրիա:

Ովկիանոսի մէջ տեղը ընդարձակ չէնք մը պիտի չիննէ՝ որ երկու ցամաք երկիրներու ճիշդ մէջ տեղը պիտի լինի, որ մեքենական միջոցով մը խօսքերն պիտի ընդունուին և զրկուին միւս կողմը:

Կերևայ թէ այս գիւտը իրագործելու ծախքերն աւելի քիչ պիտի լինին քան այժմեան ծովու տակի հեռագրական թերութեան հաստատումն:

Ինժեներ ԿԱՌՔԵՐԸ ԳԵՐՄԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ. — Ռայխսթալը 175000 մարք քուէարկեց գերմանական բանակին մէջ ինքնաշարժ կառքեր գործածելու համար:

Արդէն քանի մը փորձեր եղբր էին այդ մասին, բայց հետեանքը գոհացուցիչ չէր եղած, վասն զի միջոցները բաւական չէին: Այժմ կարելի է աւելի լուրջ փորձեր ընել մանաւանդ ռազմամթերքի փոխադրութեան համար:

Շատ հաւանական է որ քիչ ատենէն ինքնաշարժերն գործածեն նաև թնդանօթները քաջելու համար: Ինչպէս կը տեսնուի Գերմանիա անմիջապէս կուզէ պատերազմին մէջ գործածել գիտութեան բոլոր նոր գիտերը:

ՆՈՐ ԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ. — Եթէ եւրոպայի մեծ թերթերը աչքէ անցնենք կը տեսնենք թէ Ռուսաստանի, Աւստրիոյ, Ֆրանսայի, Սպանիոյ, Պէրսիոյ, Տանրմարքայի, Զուիցերլանդի, Փորթուկալի, Իտալիոյ և նոյն իսկ Գերմանիոյ մէջ միջամտութիւնը մը կը խնդրեն Անկլո-Պօէր պատերազմին համար և ամէն տեղ կ'ըսուի թէ այն կառավարութիւնը որ առաջին անգամ այդ բանին պիտի ձեռնարկէ՝ մարդկութեան երախտագիտութեանը պիտի արժանանայ:

Իրաւ է թէ Գերմանիոյ կայսրը և Իտալիոյ թագաւորը շնորհաւորումներ տեղացուցին Անգլիոյ թագուհւոյն գահոյից առջև 4000 Պօէրներու գերութեան մասին: Ուրեմ երկու Վեչապետներ ընդհանուր խղճի համաձայնութենէն բաժնուեցան:

Եւ ահա լուր մը կը տարածուի թէ Անգլիա, Գերմանիա և Իտալիա նոր երրեակ դաշնակցութիւն մը կուզեն կազմել Ասիական, Արիօնական, Եւրոպական և աշխարհային խնդիրներով դբողելու համար. և ասոր համար կը յուսան Միացեալ Նահանգաց օգնութիւնն ունենալ և իրենց հետ առնել ձաբոնը: Իայց այդ դեռ իրողութեան չէ՛ հասած է:


ԳԻՐԲ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից դրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Դասակրան, Դպրոցական, Գիտական, Գրական, Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վէնետիկ ու Վիէննա, կարելի է գիւրքամուտելի պայմաններով ձեռք բերել՝ գիւրքով Տիար Կ. Նաւասարգեանի, Գալստեան վարժարան հայոց քի Գահիրէ:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՅԷ

ՇԱՐԷ-ԱՊՏԻԻԼ-ԱՉԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանալովն, թէյի ճաշակն ևս ներայած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատե և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ընացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածախօթ է իր քօնամեայ գոյութեամբ և ընդարձակ քործանելութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր Չինաստանի, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԻԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ, ինչպէս նաև ձրմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉՍՓԱՅԱՆԻ աժանութեամբ ավ ամեն քսակի գիւրքամուտելի են:

Թէ Կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներով մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու օնակի, կեռիկ և զնոց մտախն:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆԻԹՅՈՒՆ գրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

25 — 50

ՏՕՓԵՐ ՏՕՐՃ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Աօսմաբոյժ

Ապօրին Եարե Բուպրի Թիւ 55

Վր պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցույցած ակուաներուն տոկոնուութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երայխաւորէ:

Վկայեալ աղբատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 4—5:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌ

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

Օնօզի Պաֆ վանաւասան մօտերը, կամե-կլ-Պեմաքի նիւս դիւացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախողներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատու ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և քնիարէ դախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ դաղիական, անդրիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պաքսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 38—50

ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶՍՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐԶՍՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արեւմտին ամեն ճիւղերը լաւ ձգակած և փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապտիլլա՛ եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տոններու՝ քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատուն վէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առաջնին գործատեղի՛ իր կը հիմնէ Եղբայրիկ Եարիա Գամմէլ Օթիլ ՇէֆէրՏՍՍԻ ճիշդ գիւմայ թիւ 3 արարթմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրը կուսիներ ի կարկին Ակրանիսիւման քնական մեծութեամբ:

Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւուրի:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ քնական գոյներով միմեարիւր:

Իւզաների եւ ջրաների պատկերներ, եւլն:

Լուսանկարի եւ պատկերաձանգութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուր բու, սեվիթրման եւլն:

Իրեն զիմող յաճախողներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք եւ կատարելապէս գո՛ն պիտի մնաք:

ՓԱՓՎԱԿԵՐԱՑ ԱԶԲԸ ԼՈՅՍ

ԼՕՐԱՆԾՊԱՃԻ ՕՆԵՐԻԿ

Որ Կ. Պօլսոյ Բերայի Հալիպ Զարբսիին մէջ ընտիր խմորեղէններ պատրաստելով հոշակ հանած է, այս անգամ Ապտիլի Պահականոցին դիմացի անկիւնը խանութ բայած է եւ կը պատրաստէ տեսակ տեսակ համեմատ քաղցրաւէնիք, խմորեղէնք ամենամաքուր եւ ընտիր իւղով:

Հոն զիմող յաճախողներէն իւրաքանչիւրը իրենց ճաշակին համեմատ գոհացում պիտի գտնեն:

Հարանիքներու, երեկոյթներու եւ հրաւերներու համար պէտք բոլոր անուշեղէն—խմորեղէնները կը պատրաստէ գոհացնելու պայմանաւ եւ գիւրքամուտելի քնիարով: